

Հաստատված է «Իրավաբանների հայկական ասոցիացիա»
հասարակական կազմակերպության նախագահի
2026թ. հունվարի 30-ի 1-Լ հրամանով

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
«ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

(Նոր խմբագրությամբ)

ԵՐԵՎԱՆ

2026թ.

ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	Գլուխ 1. Դրամաշնորհների տրամադրումը	3
2.	Գլուխ 2. Դրամաշնորհներին դիմելու իրավունք ունեցող կազմակերպությունները	3
3.	Գլուխ 3. Դրամաշնորհային ծրագրերի ընտրության գործընթացը	4
4.	Գլուխ 4. Դրամաշնորհային հանձնաժողովի կազմը	4
5.	Գլուխ 5. Դրամաշնորհների բյուջեն	6
6.	Գլուխ 6. Դրամաշնորհի վճարումը	7
7.	Գլուխ 7. Դրամաշնորհների օգտագործման սահմանափակումները	7
8.	Գլուխ 8. Դրամաշնորհի տրամադրման երկարացումը, կասեցումը և դադարեցումը	7
9.	Գլուխ 9. Դրամաշնորհի ծրագրի մոնիթորինգն ու գնահատումը	8
10.	Գլուխ 10. Հաշվետվություններ	9
11.	Հավելված 1. Ընթացակարգ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման	10
12.	Հավելված 2. Ընթացակարգ Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում տրամադրվող փոքր դրամաշնորհների	12
13.	Հավելված 3. Շահերի բախման բացակայության հավաստագիր	21

ԳԼՈՒԽ 1. ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

- 1.1 «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ «Կազմակերպություն») կողմից դրամաշնորհների տրամադրման նպատակը Կազմակերպության առաքելությանը նպաստող առանձին ծրագրերի և նախաձեռնությունների աջակցումն է:
- 1.2 Եթե Կազմակերպությունը ենթադրամաշնորհներ է տրամադրում դրամաշնորհատու կազմակերպության (այսուհետ՝ «Դոնորի») կողմից տրամադրված դրամաշնորհի շրջանակներում, ապա դոնորի և սույն կարգի դրույթների հակասության դեպքում գործում են Դոնորի համապատասխան կարգի դրույթները: Եթե Դոնորի կողմից տրամադրված դրամաշնորհի շրջանակներում նախատեսվում է տրամադրել ենթադրամաշնորհներ Դոնորի կողմից նախապես որոշված կազմակերպություններին, ապա Կազմակերպությունն իրականացնում է այդ ենթադրամաշնորհային ծրագրերի բյուջեներով նախատեսված գումարների տրամադրումը՝ համաձայն ենթադրամաշնորհային ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ նախապես կնքված ենթադրամաշնորհային պայմանագրերի: Այս դեպքում Կազմակերպությունը իրականացնում է այդ ենթադրամաշնորհների մոնիթորինգը, գնահատումը և հաշվետվությունների ստացումն ու հաստատումը՝ համաձայն սույն կարգի: Ենթադրամաշնորհային ծրագրերի բովանդակային մոնիթորինգն ու գնահատումը իրականացվում է Կազմակերպության կողմից, իսկ ֆինանսական մոնիթորինգն ու գնահատումը՝ Կազմակերպության կողմից որոշված աուդիտորական և (կամ) հաշվապահական ընկերության միջոցով (այսուհետ՝ մասնագիտացված ընկերություն):
- 1.3 Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում Կազմակերպության կողմից տրամադրվող ենթադրամաշնորհների առանձնահատկությունները կարգավորվում են սույն կարգի Հավելված 2-ում նշված ընթացակարգով:
- 1.4 Սույն կարգում օգտագործվող «դրամաշնորհ», «դրամաշնորհատու», «դրամաշնորհառու» եզրույթների տակ հասկացվում է նաև համապատասխանաբար՝ «ենթադրամաշնորհ», «ենթադրամաշնորհատու» և «ենթադրամաշնորհառու» եզրույթները:
- 1.5 Սույն կարգում օգտագործվող «քաղաքականություն», «կարգ» և «կարգավորումներ» եզրույթների տակ հասկացվում է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության դրամաշնորհների տրամադրման քաղաքականությունը և դրանում նախատեսված կարգավորումները:

ԳԼՈՒԽ 2. ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻՆ ԴԻՄԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 2.1 Դրամաշնորհային մրցույթին կարող են մասնակցել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով այն քաղաքացիական հասարակական կազմակերպությունները (այսուհետ՝ ՔՀԿ-ներ) և զանգվածային լրատվության միջոցները (ԶԼՄ-ները), որոնք համապատասխանում են հետևյալ պայմաններին.
- **ՔՀԿ-ների դեպքում՝** ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցվել են ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում (այսուհետ՝ պետական գրանցում)՝ որպես ոչ առևտրային և ոչ պետական/տեղական (համայնքային) կազմակերպություն:

Ծանոթություն 1. ՔՀԿ-ների առանձնացված ստորաբաժանումները չեն կարող առանձին դիմել դրամաշնորհային ծրագրին:

- ՁԼՄ-ների դեպքում՝ ստացել են պետական գրանցում՝ որպես ոչ առևտրային կամ շահույթ չհետապնդող կազմակերպություն, կամ՝ չունեն պետական գրանցում, սակայն ստեղծվել և գործարկվում են պետական գրանցում ունեցող ոչ առևտրային կամ ոչ պետական/տեղական (համայնքային) կազմակերպության կողմից:

Դրամաշնորհային ծրագրերի ֆինանսավորում ստանալու հավակնություն չեն կարող ունենալ այն ՔՀԿ-ները և ՁԼՄ-ները, որոնք ստեղծվել են պետական, տեղական (համայնքային) կամ առևտրային կազմակերպությունների (մարմինների) կողմից:

2.1.1. «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում թիրախային ուղղություններով բյուջեի մոնիթորինգ և վերլուծություն իրականացնելու նպատակով տրամադրվող դրամաշնորհային ծրագրերին կարող են դիմել ՔՀԿ-ները և ՁԼՄ-ները հետևյալ պայմաններով.

- a. ավարտել են «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում ՔՀԿ-ների և ՁԼՄ-ների հմտությունների զարգացմանն ուղղված ուսումնական ծրագիրը¹, հայտարարությամբ նշված բոլոր պայմաններին համապատասխան և ստացել են «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի կողմից կողմից ուսումնական ծրագիրը ավարտելու հավաստագիրը,
- b. հաղթող ճանաչվելու դեպքում ՔՀԿ-ները և ՁԼՄ-ները համաձայնվում են մասնակցել մեկօրյա պարտադիր ուսուցման՝ «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի ներկայացուցիչների հետ՝ դրամաշնորհների իրականացման ընթացքի վերաբերյալ փորձագիտական, այդ թվում՝ ֆինանսական խորհրդատվություն ստանալու նպատակով: Կոնսորցիումով դիմելու դեպքում, պարտադիր ուսուցմանը պետք է մասնակցեն կոնսորցիումի յուրաքանչյուր անդամ ՔՀԿ-ը/ՁԼՄ-ը,
- c. անմիջական պատասխանատվություն են կրում իրենց դրամաշնորհային ծրագրի նախապատրաստման և ամբողջական իրականացման համար:
- d. Դրամաշնորհային ծրագիր իրականացնելու դեպքում ՔՀԿ-ները և ՁԼՄ-ները կարող են դիմել ՔՀԿ-ներից և/կամ ՁԼՄ-ներից բաղկացած կոնսորցիումի միջոցով: Համատեղ ներկայացվելիք դրամաշնորհային ծրագրի հայտի դեպքում պետք է սահմանվի համագործակցող կողմերի հարաբերությունները, դրանց միջև պարտականությունների և լիազորությունների բաժանումը, ինչպես նաև կցվեն պարտավորագիր-նամակներ բոլոր համագործակցող կողմերից: Կոնսորցիումի բոլոր անդամները պետք է ավարտած լինեն 2.1.1 կետի «a» ենթակետով նախատեսված ուսումնական ծրագիրը,
- e. ՁԼՄ-ների կողմից ներկայացրած դրամաշնորհային ծրագրի դեպքում՝ ծրագրի հիմնական հայտատու պետք է լինի ՁԼՄ կամ կոնսորցիումի անդամներից առնվազն մեկը պետք է լինի ՁԼՄ: Սույն քաղաքականության իմաստով ՁԼՄ-ին վերաբերող պահանջները ներկայացված են 2.1 կետում:

¹ <https://budgets.am/1596.html>

2.1.2. «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում շահերի պաշտպանության քարոզարշավ իրականացնելու նպատակով տրամադրվող դրամաշնորհային ծրագրերին կարող են դիմել ՔՀԿ-ները կամ ՁԼՄ-ները հետևյալ պայմաններով.

- a. ավարտել են «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում ՔՀԿ-ների և ՁԼՄ-ների հմտությունների զարգացմանն ուղղված ուսումնական ծրագիրը², հայտարարությամբ նշված բոլոր պայմաններին համապատասխան և ստացել են «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի կողմից ուսումնական ծրագիրը ավարտելու հավաստագիրը,
- b. հաղթող ճանաչվելու դեպքում ՔՀԿ-ները և ՁԼՄ-ները համաձայնվում են մասնակցել մեկօրյա պարտադիր ուսուցման՝ «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի ներկայացուցիչների հետ՝ դրամաշնորհների իրականացման ընթացքի վերաբերյալ փորձագիտական, այդ թվում՝ ֆինանսական խորհրդատվություն ստանալու նպատակով: Կոնսորցիումով դիմելու դեպքում, պարտադիր ուսուցմանը պետք է մասնակցեն կոնսորցիումի յուրաքանչյուր անդամ ՔՀԿ-ը/ՁԼՄ-ը,
- c. անմիջական պատասխանատվություն են կրում իրենց դրամաշնորհային ծրագրի նախապատրաստման և ամբողջական իրականացման համար,
- d. դրամաշնորհային ծրագրերից մեկը կարող է ուղղված լինել «Բաց Կառավարման Գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության 2022-2024 թվականների գործողությունների ծրագրի 4-րդ՝ «Բյուջետային գործընթացում մասնակցային մեխանիզմների լրամշակում և ներդրում» հանձնառության կատարմանը օժանդակության տրամադրմանը,
- e. Դրամաշնորհային ծրագիր իրականացնելու դեպքում ՔՀԿ-ները, ՁԼՄ-ները և լրագրողները կարող են դիմել ՔՀԿ-ներից և/կամ ՁԼՄ-ներից բաղկացած կոնսորցիումի միջոցով, որը կդիտվի որպես առավելություն: Համատեղ ներկայացվելիք դրամաշնորհային ծրագրի հայտի դեպքում պետք է սահմանվի համագործակցող կողմերի հարաբերությունները, դրանց միջև պարտականությունների և լիազորությունների բաժանումը, ինչպես նաև կցվեն պարտավորագիր-նամակներ բոլոր համագործակցող կողմերից: Կոնսորցիումի դեպքում առնվազն հիմնական հայտատուն պետք է ավարտած լինի 2.1.2 կետի «a» ենթակետով նախատեսված ուսումնական ծրագիրը,
- f. ՁԼՄ-ների կողմից ներկայացրած դրամաշնորհային ծրագրի դեպքում՝ ծրագրի հիմնական հայտատու պետք է լինի ՁԼՄ կամ կոնսորցիումի անդամներից առնվազն մեկը պետք է լինի ՁԼՄ:

2.1.3. «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում բյուջետային ոլորտի երիտասարդ մասնագետներին աշխատանքային հիմունքներով ՔՀԿ-ում/ՁԼՄ-ում ներգրավելու նպատակով տրամադրվող դրամաշնորհային ծրագրերին կարող են դիմել ՔՀԿ-ները/ՁԼՄ-ները հետևյալ պայմաններով.

- a. ավարտել են «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում ՔՀԿ-ների և ՁԼՄ-ների հմտությունների զարգացմանն

² <https://budgets.am/1596.html>

ուղղված ուսումնական ծրագիրը³՝ հայտարարությամբ նշված բոլոր պայմաններին համապատասխան և ստացել են «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի կողմից ուսումնական ծրագիրը ավարտելու հավաստագիրը,

- b. ՔՀԿ-ների/ԶԼՄ-ների կողմից բյուջեի վերլուծության և մոնիթորինգի իրականացման, այդ թվում՝ պարզեցված բյուջեներ մշակելու, ինչպես նաև շահերի պաշտպանության քարոզարշավի իրականացման նպատակով գործարկվող ծրագրերում աշխատանքային հիմունքներով ներգրավում են այն երիտասարդ մասնագետները, որոնք ավարտել են «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում երիտասարդ մասնագետների բյուջետային գիտելիքների փոխանցման ուղղված ուսումնական ծրագիրը⁴՝ հայտարարությամբ նշված բոլոր պայմաններին համապատասխան, ստացել են ծրագիրը ավարտելու հավաստագիրը «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի կողմից,
- c. դիմել են «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում թիրախային ուղղություններով բյուջեի մոնիթորինգ և վերլուծություն իրականացնելու, այդ թվում՝ պարզեցված բյուջեներ մշակելու նպատակով հայտարարված ենթադրամաշնորհային հայտերի մրցույթին,
- d. համաձայնվում են դիմել «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում հայտարարվող թիրախային ուղղություններով շահերի պաշտպանության քարոզարշավներ իրականացնելու նպատակով դրամաշնորհային ծրագրերին: Համաձայնության բացակայության դեպքում, յուրաքանչյուր դեպքով ծրագիրը (Դրամաշնորհային հանձնաժողովը) հայտատուի, իսկ կոնսորցիումով դիմելու դեպքում՝ Կոնսորցիումի հետ առանձին կերպով քննարկում է սույն դրամաշնորհի տրամադրման ժամկետը և բյուջեն,
- e. հաղթող ճանաչվելու դեպքում ՔՀԿ-ները և ԶԼՄ-ները համաձայնվում են մասնակցել մեկօրյա պարտադիր ուսուցման՝ «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի ներկայացուցիչների հետ՝ դրամաշնորհների իրականացման ընթացքի վերաբերյալ փորձագիտական, այդ թվում՝ ֆինանսական խորհրդատվություն ստանալու նպատակով: Կոնսորցիումով դիմելու դեպքում, պարտադիր ուսուցմանը պետք է մասնակցեն կոնսորցիումի յուրաքանչյուր անդամ ՔՀԿ-ը/ԶԼՄ-ը,
- f. անմիջական պատասխանատվություն են կրում իրենց դրամաշնորհային ծրագրի նախապատրաստման և ամբողջական իրականացման համար,
- g. կոնսորցիումի միջոցով ներկայացվելիք ենթադրամաշնորհային ծրագրի հայտի դեպքում պետք է սահմանվի, որ երիտասարդ մասնագետի հետ աշխատանքային պայմանագիր է կնքում բյուջեի մոնիթորինգի և վերլուծության, պարզեցված բյուջեներ մշակելու նպատակով ենթադրամաշնորհին դիմած հիմնական կազմակերպությունը,
- h. ԶԼՄ-ների կողմից ներկայացրած ենթադրամաշնորհային ծրագրի դեպքում՝ ծրագրի հիմնական հայտատու պետք է լինի ԶԼՄ կամ կոնսորցիումի անդամներից առնվազն մեկը պետք է լինի ԶԼՄ:

³ <https://budgets.am/1596.html>

⁴ <https://budgets.am/1603.html>

ԳԼՈՒԽ 3. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

- 3.1 Դրամաշնորհային մրցույթին ներկայացված բոլոր հայտերը (այսուհետ՝ հայտեր) ենթակա են գնահատման, որը ներառում է նաև դրամաշնորհային մրցույթի հայտարարությամբ և կից փաստաթղթերով սահմանված պայմանների համապատասխանության ստուգումը: Հայտերը կգնահատվեն սույն կարգի Հավելված 1-ով սահմանված «Հայտերի գնահատում և ընտրության չափանիշներ» բաժնում նախատեսված կարգով:

ԳԼՈՒԽ 4. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

- 4.1 Դրամաշնորհային ծրագրերի գնահատումն ու ընտրությունը կատարվում է Կազմակերպության նախագահի հրամանով ստեղծված դրամաշնորհային հանձնաժողովի կողմից: Դրամաշնորհային հանձնաժողովի անդամների թիվն ու անհատական կազմը որոշվում է Կազմակերպության նախագահի կողմից:
- 4.2 Կազմակերպության կողմից իրականացվող տարբեր ծրագրերի շրջանակներում կարող են ստեղծվել առանձին դրամաշնորհային հանձնաժողովներ:
- 4.3 Դրամաշնորհային հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել Կազմակերպության, Կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերի, գործընկեր հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև ոլորտային անկախ փորձագետներ, դիտորդներ:
- 4.4 Դրամաշնորհային ծրագրերի բովանդակային վերահսկումը, մոնիթորինգն ու գնահատումը իրականացվում է Կազմակերպության կողմից նշանակված լիազոր անձի՝ կողմից, իսկ ֆինանսական վերահսկումը, մոնիթորինգն ու գնահատումը՝ Կազմակերպության կողմից որոշված մասնագիտացված ընկերության կողմից:
- 4.5 Անհրաժեշտության դեպքում Կազմակերպությունը կարող է հանձնաժողովի նիստերին ներգրավել փորձագետների և (կամ) դիտորդների՝ խորհրդակցական ձայնի իրավունքով: Այսպես.
1. Փորձագետները դիմող կազմակերպությունների և նրանց կողմից առաջարկվող ծրագրերի ոլորտներում աշխատողներ կամ ոլորտի մասնագետներ են: Նրանց հիմնական գործառույթն է՝ դրամաշնորհային հանձնաժողովի անդամներին տրամադրել տեղեկություններ և պարզաբանումներ տարբեր խնդիրների և հարցերի վերաբերյալ՝ որոշումների ընդունման գործընթացն առավել օբյեկտիվ և անաչառ կազմակերպելու նպատակով: Փորձագետներն ուսումնասիրում են այն դիմումները, որոնք առնչվում են նրանց փորձագիտական բնագավառին:
 2. Դիտորդները Կազմակերպությունից դուրս գործող անհատներ են, ովքեր մասնակցում են հայտերի գնահատման և ընտրության գործընթացին՝ ապահովելով օբյեկտիվությունն ու անաչառությունը, ովքեր քննարկման ընթացքում ունեն կարծիք հայտնելու և արտահայտվելու իրավունք: Որպես դիտորդ կարող են հանդես գալ միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, դրամաշնորհային ծրագրերի ղեկավարներ, համակարգողներ, ովքեր հրավիրվում են փորձի փոխանակման և ընտրության գործընթացի մասին կարծիք հայտնելու նպատակով: Նրանցից չի պահանջվում ուսումնասիրել դիմումները:
- 4.6 Յուրաքանչյուր անձ, ով հանդիսանում է դրամաշնորհային հանձնաժողովի անդամ, փորձագետ և դիտորդ, պարտավոր է հայտարարել հնարավոր և առկա շահերի բախման մասին և չառաջնորդվել մասնավոր շահով:
- «Շահերի բախում» եզրույթը սահմանվում է որպես իրավիճակ, երբ դրամաշնորհային հանձնաժողովի անդամը, փորձագետը և դիտորդը ունի իր, իրեն փոխկապակցված անձի

կամ երրորդ անձի հետ կապված տնտեսական շահ, քաղաքական կամ ազգային, ընտանեկան կամ զգացմունքային կապեր կամ ցանկացած այլ կապ կամ համատեղ շահագրգռվածություն (այսուհետ՝ մասնավոր շահ), որն ազդում է կամ առերևույթ ազդում է կամ ողջամտորեն կարող է ազդել դրամաշնորհային մրցույթին ներկայացված հայտերի պատշաճ, օբյեկտիվ և անաչառ գնահատման վրա:

«Մասնավոր շահով առաջնորդվել» նշանակում է այնպիսի գործողություն կատարելը, անգործություն դրսևորելը կամ որոշում ընդունելը (այդ թվում՝ կոլեգիալ մարմնի կազմում որոշում ընդունելուն մասնակցելը կամ որոշումներ ընդունելուն հանգեցնելը, ինչպես օրինակ՝ տեղեկություններ և պարզաբանումներ տրամադրելը կամ կարծիք հայտնելը և արտահայտվելը քննարկվող հարցերի և խնդիրների վերաբերյալ), որը թեև ինքնին օրինական է, սակայն հանգեցնում կամ նպաստում է կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել դրամաշնորհային մրցույթին մասնակցած հայտատուների ընտրությանը:

- 4.7 Եթե այսպիսի իրավիճակներ բացահայտվեն, ապա շահերի բախում ունեցող անձն իրավունք չունի ներգրավվել հայտերի գնահատման գործընթացին: Եթե նշված հանգամանքներն ի հայտ են գալիս հայտի գնահատման գործընթացից հետո, ապա այն կհանգեցնի դրամաշնորհային ծրագրի ֆինանսավորման դադարեցմանը սույն կարգի 8-րդ գլխով նախատեսված կարգով: Հանձնաժողովի անդամը, փորձագետը և դիտորդը նախքան հայտերի գնահատման գործընթացի մեկնարկը, ստորագրում են շահերի բախման բացակայության մասին հավաստագիր: Շահերի բախման բացակայության մասին հավաստագիրը կցված է սույն Կարգին՝ որպես Հավելված 3: Բոլոր դրամաշնորհային որոշումները հաստատվում են Կազմակերպության դրամաշնորհային հանձնաժողովի կողմից:

ԳԼՈՒԽ 5. ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆ

- 5.1 Հայտարարվող դրամաշնորհների բյուջեն կախված է տվյալ պահին Կազմակերպությունում դրամաշնորհային նպատակների համար հատկացված գումարից:
- 5.2 Դրամաշնորհառուն, Կազմակերպությանը նախապես գրավոր կարգով տեղեկացնելով, կարող է բյուջեի ծախսային հոդվածների գումարներում կատարել փոփոխություններ, որոնց հանրագումարը չպետք է գերազանցի ընդհանուր բյուջեի տասը տոկոսը (10%): Դրամաշնորհի ստացողի կողմից բյուջեի ծախսային հոդվածների գումարներում կատարվող փոփոխությունների հանրագումարը չպետք է գերազանցի ընդհանուր բյուջեի տասը տոկոսը (10%), որի մասին նախապես գրավոր կարգով պետք է տեղեկացվի Իրավաբանների հայկական ասոցիացիայի (ԻՀԱ) պատասխանատու անձը և ստանա նրա գրավոր համաձայնությունը: Ընդհանուր բյուջեի տասը տոկոսը (10%) գերազանցող գումարի կամ դրամաշնորհի նպատակի փոփոխությունները պետք է կատարվեն դրամաշնորհային պայմանագրի երկկողմ հաստատված գրավոր փոփոխությունների տեսքով:
- 5.3 Բյուջեն պետք է մանրամասնորեն ներկայացնի դրամաշնորհային ծրագրին անհրաժեշտ ֆինանսական աջակցության ողջ ծավալը:
- 5.4 Բյուջեն պետք է ներառի ծրագրի ծախսերը, աշխատավարձը, սարքավորումների արժեքը, վարչական ծախսերը, գրենական պիտույքները, տրանսպորտը, օրապահիկը, բանկային ծառայությունների վճարներն ու ծրագրի իրականացման ընթացքում հնարավոր այլ ծախսերը:
- 5.5 Դրամաշնորհառուն պետք է ներկայացնի նաև բյուջեի մանրամասն նկարագրությունը:

- 5.6 Հաշվի առնելով յուրաքանչյուր դրամաշնորհային ծրագրին տրամադրվող սահմանափակ բյուջեն՝ սարքավորումների և կապիտալ ծախսերի ֆինանսավորման պահանջները չեն խրախուսվում:
- 5.7 Սույն կետում նշված կարգավորումները կարող են փոփոխվել՝ ելնելով տվյալ պահին Կազմակերպության կողմից հայտարարվող դրամաշնորհային մրցույթների առանձնահատկություններից:

ԳԼՈՒԽ 6. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՎՃԱՐՈՒՄԸ

- 6.1 Կազմակերպությունը դրամաշնորհի վճարումները կատարում է կողմերի միջև կնքված դրամաշնորհի մասին պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով:
- 6.2 Կազմակերպությունը, իր հայեցողությամբ, կարող է ուղղակի վճարում կատարել ապրանքներ կամ ծառայություններ վաճառողին, որը կընտրվի դրամաշնորհի ստացողի կողմից կամ նրա անունից:

ԳԼՈՒԽ 7. ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

- 7.1 Արգելվում է դրամաշնորհային միջոցները կամ այդ միջոցներով ձեռքբերված գույքը և ծառայությունները դրամաշնորհի կամ տեխնիկական աջակցության կարգով փոխանցվել մեկ այլ կազմակերպության կամ անհատի՝ առանց Կազմակերպության կողմից գրավոր թույլտվությունը ստանալու:
- 7.2 Արգելվում է օգտագործել դրամաշնորհային միջոցները բիզնես-գործընկերներին վճարումների կամ ընտանիքի անդամների կողմից անձնական կարիքները հոգալու համար:
- 7.3 Դրամաշնորհային ծրագրի ծախսումներ չեն կարող կատարվել դրամաշնորհի իրականացման համար հաստատված ժամկետից դուրս: Այս պարագայում կիրառվում է սույն Կարգի 7.6-րդ կետով նախատեսված կարգավորումները:
- 7.4 Արգելվում է դրամաշնորհային միջոցներից վճարել դրամաշնորհի իրականացման համար նախատեսված ժամկետից դուրս կատարված դրամաշնորհային ծրագրի ծախսումների համար:
- 7.5 Դրամաշնորհային պայմանագրի խախտումներով կատարված գործողությունները չեն կարող վճարվել Ծրագրի բյուջեի հաշվին: Խախտումներով կատարված ծախսումները չեն ընդունվի Կազմակերպության կողմից:
- 7.6 Ծրագրի ավարտից հետո առկա խնայողությունները փոխանցվում են Կազմակերպությանը:
- 7.7 Ծրագրի ֆինանսական միջոցները չեն կարող ուղղվել մարդասիրական կամ բարեգործական գործունեության ֆինանսավորմանը:

ԳԼՈՒԽ 8. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՐԿԱՐԱՑՈՒՄԸ, ԿԱՄԵՅՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

- 8.1 Դրամաշնորհատուի պատճառաբանված գրավոր դիմումի հիման վրա Կազմակերպությունն իրավունք ունի իր հայեցողությամբ երկարացնել դրամաշնորհային ծրագրի գործունեության ժամկետը մինչև մեկ ամիս ժամկետով՝ առանց հավելյալ ֆինանսական միջոցների տրամադրման: Անհրաժեշտության դեպքում, Դրամաշնորհատուն իրավունք ունի օրենքով չարգելված այլ աղբյուրներից ներդնել ֆինանսական միջոցներ ծրագրի ամբողջական իրականացման նպատակով՝ այդ մասին

նախապես տեղեկացնելով Կազմակերպությանը և ստանալով վերջինիս գրավոր համաձայնությունը:

- 8.2 Կազմակերպությունն իրավունք ունի մինչև դրամաշնորհային պայմանագրով սահմանված ժամկետի լրանալն ամբողջովին կամ մասամբ դադարեցնել կամ կասեցնել դրամաշնորհային ծրագիրը, եթե հայտնաբերվի, որ դրամաշնորհատուն խախտել է կամ ոչ պատշաճ է կատարել դրամաշնորհի պայմանագրի և (կամ) սույն քաղաքականության պայմանները:
- 8.3 Սույն կարգի 8.2 կետում նշված խախտումների հայտնաբերման դեպքում դրամաշնորհի տրամադրումը դադարեցնելու կամ կասեցնելու մասին որոշումը կարող է կայացվել հետևյալ դեպքերում.
1. Դրամաշնորհատուն դրամաշնորհային պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում Կազմակերպությանը չի ներկայացրել ծրագրի պատմողական (նկարագրական) հաշվետվություններ և այլ անհրաժեշտ փաստաթղթեր, տեղեկություններ:
 2. Դրամաշնորհատուն դրամաշնորհային պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում Կազմակերպությանը և (կամ) Կազմակերպության կողմից լիազորված հաշվապահական (ֆինանսական) ընկերությանը չի ներկայացրել համապատասխան ֆինանսական հաշվետվություններ և այլ անհրաժեշտ փաստաթղթեր:
 3. Դրամաշնորհատուն թույլ է տվել ֆինանսական գրանցումների թերացումներ:
 4. Դրամաշնորհային միջոցներն օգտագործել է ծրագրի բյուջեով չնախատեսված և Կազմակերպության կողմից չհաստատված ծախսերի համար:
 5. Դրամաշնորհատուն Կազմակերպությանը կամ նրա կողմից լիազորված մասնագիտացված ընկերությանը ներկայացրել է սխալ և ոչ լիարժեք տեղեկատվություն, ինչպես նաև կեղծ փաստաթղթեր դրամաշնորհատու կազմակերպության, իր գործընկեր հայտատուների կամ դրամաշնորհին առնչվող որևէ փաստի վերաբերյալ:
 6. Թույլ են տրվել սույն քաղաքականության խախտումներ:
 7. Հայտնաբերվել են այլ խախտումներ և թերացումներ:
 8. Իրականացրել է Կազմակերպության կողմից հաստատված գործունեությունից դուրս այլ աշխատանքներ:
- 8.4 Դրամաշնորհի իրականացումը վերսկսվում է կասեցման մասին որոշում կայացնելու համար հիմք հանդիսացած խախտումների և թերացումների վերացման դեպքում:
- 8.5 Սույն գլխում նախատեսված որոշումներն ընդունվում են Կազմակերպության նախագահի կողմից:

ԳԼՈՒԽ 9. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

- 9.1 Ծրագրի մոնիթորինգ և գնահատում անցկացնող լիազորված անձը և (կամ) մասնագիտացված ընկերությունը ստուգում է ծրագրի գրանցած առաջընթացը և արդյունքները:
- 9.2 Ընթացիկ աշխատանքների և ծախսերի վերահսկումն իրականացվում է դրամաշնորհային պայմանագրին կից հաստատված ծրագրի առաջարկի և դրա հավելվածների համաձայն:
- 9.3 Կազմակերպության ներկայացուցիչներն իրավունք ունեն՝ ցանկացած պահի այցելել դրամաշնորհի ստացած կազմակերպություն՝ ծրագրի ընթացքն ու արդյունքները ստուգելու համար, ինչպես նաև պահանջել և ստանալ ծրագրի կատարմանն ուղղված ցանկացած գրավոր և բանավոր տեղեկատվություն, այդ թվում՝ փաստաթուղթ:

- 9.4 Հնարավորության դեպքում Կազմակերպությունը դրամաշնորհառուին իր այցելության մասին տեղեկացնում է կանխավ, սակայն նախօրոք տեղեկացումը պարտադիր պայման չէ:
- 9.5 Մոնիթորինգի և գնահատման իրականացումը ապահովում է ծրագրի սկզբնական ելակետային իրավիճակի նկարագիրը, իրականացված ծրագրի արդյունքում կատարված փոփոխությունները, ծրագրային գործողությունների համապատասխանեցումը ու համաչափությունը ծրագրի բյուջեով նախատեսված ծախսումներին՝ ուղեկցվելով համապատասխան հիմնավորող փաստաթղթերով, ծրագրի տեսանելիությունն ու հաղորդակցությունն ապահովող նյութերով, լուսանկարներով և այլն:
- 9.6 Մոնիթորինգի և գնահատման նպատակով՝ Կազմակերպությունը կարող է պահանջել դրամաշնորհառու (դրամաշնորհ ստացած) կազմակերպություններից անցկացնել եռամսյակային ժողովներ (աշխատանքային հանդիպումներ)՝ Կազմակերպության ներկայացուցչի մասնակցությամբ:

ԳԼՈՒԽ 10. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 10.1 Դրամաշնորհ ստացողը պետք է ծրագրի իրականացման երկու մասից բաղկացած (պատմողական (նկարագրական) և ֆինանսական) հաշվետվություն ներկայացնի:

10.2 Պատմողական (նկարագրական) հաշվետվություն

1. Պատմողական հաշվետվությունը արտացոլում է ծրագրի շրջանակներում կատարված գործողությունների նկարագրությունը և ազդեցության վերլուծությունը:
2. Պատմողական հաշվետվությունը ներկայացվում է երկու ձևաչափով՝ միջանկյալ և վերջնական: Միջանկյալ պատմողական հաշվետվությունների ներկայացման ժամանակահատվածը կարգավորվում են դրամաշնորհային համաձայնագրերով (պայմանագրերով):
3. Միջանկյալ հաշվետվությունը ներկայացվում է մինչև հաջորդ մասնաբաժնի փոխանցումը, եթե գումարը տրվում է մասնաբաժիններով:
4. Վերջնական պատմողական հաշվետվությունը ներկայացվում է ծրագրի ավարտից հետո 15-ից 30 օրվա ընթացքում՝ կախված Կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերի տևողությունից, եթե այլ բան նախատեսված չէ դրամաշնորհային համաձայնագրով (պայմանագրով):
5. Դրամաշնորհառուն հաշվետվությանը կից պետք է ներկայացնի Ծրագրի կատարումն ապահովող անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը, այդ թվում նաև տպագրություններ, լուսանկարներ, տեսանյութեր և այլն: Կազմակերպության պահանջով, անհրաժեշտ նյութերն ու փաստաթղթերը ներկայացվում է բնօրինակ տարբերակով:
6. Պատմողական հաշվետվությունները կարող են հրապարակվել Կազմակերպության, դրամաշնորհ տրամադրած Ծրագիրն իրականացնող կոնսորցիումի անդամ կազմակերպությունների և ծրագրային կայքերում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ տեսանելիությունն ապահովելու նպատակով նաև կարող են տարածվել ՋԼՄ-ների շրջանում:

10.3 Ֆինանսական հաշվետվություն

1. Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է Կազմակերպության կողմից լիազորված հաշվապահական (ֆինանսական) ընկերությանը և պետք է արտացոլի ծախսերի մանրամասն զեկույց՝ կից՝ ներկայացնելով յուրաքանչյուր ծախսը հիմնավորող փաստաթղթերը, այն է՝ հաշիվ-ապրանքագրեր, ստացականներ,

ծառայության կամ աշխատանքային պայմանագրեր, բանկային ձևեր և այլն (տե՛ս Հավելված 1):

2. Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է երկու ձևաչափով՝ միջանկյալ և վերջնական: Միջանկյալ պատմողական հաշվետվությունների ներկայացման ժամանակահատվածը կարգավորվում են դրամաշնորհային համաձայնագրերով (պայմանագրերով):
3. Դրամաշնորհառուն պետք է ներկայացնի միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ մինչև գումարի հաջորդ մասնաբաժնի փոխանցումը, եթե գումարը տրվում է մասնաբաժիններով:
4. Վերջնական ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են ծրագրի ավարտից հետո 15-ից 30 օրվա ընթացքում՝ կախված Կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերի տևողությունից, եթե այլ բան նախատեսված չէ դրամաշնորհային համաձայնագրով (պայմանագրով):
5. Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընթացակարգը ներկայացվում է սույն քաղաքականության Հավելված 1-ով սահմանված ընթացակարգով:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

- 1.1 Ֆինանսական (միջանկյալ և վերջնական) հաշվետվությունը ներկայացվում է ծրագրի պատմողական հաշվետվությանը հետ միասին:
- 1.2 Հաշվետվությունը ներկայացնում է ծրագրի ղեկավարը և (կամ) պատասխանատու հաշվապահը նույն ժամկետներում, ինչ միջանկյալ և վերջնական պատմողական հաշվետվությունները:
- 1.3 Հաշվետվությունը կնքվում է կազմակերպության կնիքով և պետք է ստորագրված լինի ծրագրի ղեկավարի և հաշվապահի կողմից՝ հաստատված կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի կողմից:
- 1.4 Հաշվետվությունը կազմվում է աղյուսակի տեսքով՝ ըստ ծախսերի հոդվածների, համադրելով փաստացի ծախսերը բյուջեի ծախսերի հետ և նշելով շեղման չափը և տոկոսը:
- 1.5 Հաշվետվությանը կից ներկայացվում են բոլոր հաշվապահական փաստաթղթերի և հաշվարկների կրկնօրինակները, որոնք ընդգրկում են՝
- աշխատավարձի հաշվարկավճարային փաստաթղթեր,
 - կատարողական ակտեր,
 - վճարման տեղեկագրեր,
 - հաշիվ ֆակտուրաներ (առկայության դեպքում), ինչպես նաև վճարման հաշիվներ,
 - ընդունման-հանձման ակտեր,
 - գործուղման հրամաններ և վկայականներ,
 - վառելիքի (բենզինի) նորմատիվ ծախսերի վերաբերյալ հրամաններ,
 - դրամարկղի գիրք,
 - վճարման հանձնարարականներ,
 - բանկի քաղվածքներ,
 - պահեստի ելքի և մուտքի ապրանքագրեր,
 - տրանսպորտային ուղեգրեր,
 - այլ ծախսային փաստաթղթեր:
- 1.6 Բոլոր փաստաթղթերը հարկավոր է ներկայացվել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող բոլոր վավերապայմանների առկայությամբ:
- 1.7 Անհրաժեշտության դեպքում, Կազմակերպությունը կամ Կազմակերպության կողմից լիազորված հաշվապահական (ֆինանսական) ընկերությունը կարող է պահանջել փաստաթղթերի բնօրինակներ:

2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄ

- 2.1 Ֆինանսական հաշվետվությունը գնահատվում է Կազմակերպության կողմից լիազորված մասնագիտացված ընկերության կողմից՝ այն ներկայացնելուց հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում, որի վերաբերյալ կազմվում է եզրակացություն: Մասնագիտացված ընկերությունը գնահատման արդյունքների վերաբերյալ եզրակացությունը ներկայացնում է Կազմակերպության լիազորված անձին: Եզրակացության՝ Կազմակերպության

լիազորված անձի կողմից հաստատվելուց հետո դրա մասին տեղեկացվում է ծրագրի ղեկավարը և (կամ) հաշվապահը:

2.2 Ֆինանսական հաշվետվությունը համարվում է ընդունված դրա՝ Կազմակերպության նախագահի կողմից ստորագրված և Կազմակերպության կնիքով վավերացված լինելու դեպքում:

2.3 Թերությունների առկայության դեպքում Կազմակերպության լիազորված անձի կողմից կազմվում է թերությունների ամփոփագիր և ներկայացվում Դրամաշնորհառուին:

2.4 Թերությունների ամփոփագրում նշված ուղղումները կատարելուց հետո ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն ընթացակարգի 2.1 կետում սահմանված կարգով:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ «ԲՅՈՒՋԵՆԵՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՏՐԱՄԱՐԴՎՈՂ ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ

1. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում (այսուհետ՝ Ծրագիր) նախատեսվում է տրամադրել 3 տեսակի ենթադրամաշնորհներ.

Առաջին՝ բյուջեի մոնիթորինգ և վերլուծություն իրականացնելու նպատակով տրամադրվող դրամաշնորհային ծրագրեր: Դրամաշնորհին կարող են դիմել ՔՀԿ-ները և ՁԼՄ-ները: Թիրախային ոլորտներն են՝ (1) արդարադատություն, (2) կրթություն, (3) սոցիալական ապահովություն, (4) գյուղատնտեսություն: Թիրախային ոլորտի ուղղությունները ներկայացվում են մրցույթի հայտարարության շրջանակներում: Տրամադրվելու է մինչև 12 դրամաշնորհ՝ երկու փուլով: Յուրաքանչյուր փուլում թիրախային ոլորտներում տրամադրվելու է մինչև 6 դրամաշնորհ, որից՝ 4-ը բյուջեի մոնիթորինգ և վերլուծություն իրականացնելու, և 2-ը՝ պարզեցված բյուջեներ մշակելու նպատակով: Յուրաքանչյուր դրամաշնորհի բյուջեն նշվելու է դրամաշնորհային ծրագրերի մրցույթների վերաբերյալ հայտարարություններով: Յուրաքանչյուր դրամաշնորհի տևողությունն է 6 ամիս: Առաջին դրամաշնորհին դիմելու այլ մանրամասներ ներկայացված սույն քաղաքականության 2-րդ գլխի 2.1.1 կետով: Այլ ընթացակարգային մանրամասներ կկարգավորվեն դրամաշնորհային ծրագրերի մրցույթների վերաբերյալ հայտարարություններով:

Երկրորդ՝ բյուջետային գործընթացում թիրախային ուղղություններով շահերի պաշտպանության քարոզարշավ իրականացնելու նպատակով տրամադրվող դրամաշնորհային ծրագրեր: Դրամաշնորհին կարող են դիմել ՔՀԿ-ները և ՁԼՄ-ները: Թիրախային ոլորտներն են՝ (1) արդարադատություն, (2) կրթություն, (3) սոցիալական ապահովություն, (4) գյուղատնտեսություն: Թիրախային ոլորտի ուղղությունները ներկայացվում են մրցույթի հայտարարության շրջանակներում: Հայտատուների կողմից առաջին տեսակի դրամաշնորհային ծրագրերի և/կամ համանման այլ ծրագրերի մոնիթորինգային արդյունքներից օգտվելը և դրանց հիման վրա շահերի պաշտպանության նպատակով հատկորոշված հիմնախնդիրների շուրջ ծրագիր իրականացնելու մոտեցումը պարտադիր է: Յուրաքանչյուր փուլում թիրախային ոլորտներում տրամադրվելու է մինչև 20 դրամաշնորհ, որից առնվազն 5-ը՝ ոչ առևտրային կարգավիճակ ունեցող կամ շահույթ չհետապնդող ՁԼՄ-ներին, կամ ՔՀԿ-ներից և ՁԼՄ-ներից բաղկացած կոնսորցիումներին՝ ՔՀԿ-ների/ՁԼՄ-ների մասնակցությամբ հանրային քաղաքականությունները ջատագովելու և/կամ դրանց ընդունմանը/փոփոխմանը աջակցելուն, ինչպես նաև շահերի պաշտպանության քարոզարշավներին և այդ նպատակով ընթացող երկխոսություններին ներգրավվելու համար: Յուրաքանչյուր փուլում տրամադրվելու է մինչև 10 դրամաշնորհ: Յուրաքանչյուր դրամաշնորհի բյուջեն նշվելու է դրամաշնորհային ծրագրերի մրցույթների վերաբերյալ հայտարարություններով: Յուրաքանչյուր դրամաշնորհի տևողությունն է 6 ամիս: Երկրորդ դրամաշնորհին դիմելու այլ մանրամասներ ներկայացված են սույն քաղաքականության 2-րդ գլխի 2.1.2 կետով: Այլ ընթացակարգային մանրամասներ կկարգավորվեն դրամաշնորհային ծրագրերի մրցույթների վերաբերյալ հայտարարություններով:

Երրորդ՝ բյուջետային ոլորտի երիտասարդ մասնագետներին աշխատանքային հիմունքներով ՔՀԿ-ում/ԶԼՄ-ում ներգրավելու նպատակով տրամադրվող դրամաշնորհային ծրագրեր: Այս առումով, ՔՀԿ-ներում/ԶԼՄ-ներում աշխատանքի անցնելու նպատակով Կազմակերպությունը հիմնվելով «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում երիտասարդ մասնագետների բյուջետային գիտելիքների փոխանցման ուղղված ուսումնական ծրագրի արդյունքների վրա, կազմում է 12 երիտասարդ մասնագետների ցանկը և իր հայեցողությամբ որոշում է այն երիտասարդ մասնագետին, որը աշխատանքի է անցնելու ընտրված ՔՀԿ-ում: Ընդհանուր առմամբ, տրամադրվելու 12 դրամաշնորհ՝ երկու փուլով: Յուրաքանչյուր փուլում տրամադրվելու է 6 դրամաշնորհ՝ յուրաքանչյուրը մեկ տարի տևողությամբ: Դրամաշնորհը իրենից ներկայացնում է երիտասարդ մասնագետին տրամադրվող ամենամսյա աշխատավարձ, ինչը ենթադրվում է, որ ստացած դրամաշնորհի միջոցով ՔՀԿ-ը/ԶԼՄ-ը աշխատանքային հիմունքներում ներգրավում է երիտասարդ մասնագետի՝ բյուջեի վերլուծություն և մոնիթորինգ իրականացնելու, այդ թվում՝ պարզեցված բյուջեներ մշակելու, և/կամ բյուջետային գործընթացում շահերի պաշտպանություն իրականացնելու նպատակով: Այս տեսակ դրամաշնորհի արդյունքում աշխատանքի է անցնելու 12 երիտասարդ մասնագետ, որոնց հետ կնքվելու է մեկ տարի ժամկետով աշխատանքային պայմանագիր: Յուրաքանչյուր դրամաշնորհի բյուջեն նշվելու է դրամաշնորհային ծրագրերի մրցույթների վերաբերյալ հայտարարություններով: Երկրորդ դրամաշնորհին դիմելու այլ մանրամասներ ներկայացված են սույն քաղաքականության 2-րդ գլխի 2.1.3 կետով: Այլ ընթացակարգային մանրամասներ կկարգավորվեն դրամաշնորհային ծրագրերի (աշխատանքի ընդունման) մրցույթների վերաբերյալ հայտարարություններով:

Ծանոթագրություն: Դրամաշնորհների առաջին տեսակի՝ բյուջեի մոնիթորինգ և վերլուծություն իրականացնելու նպատակով տրամադրվող դրամաշնորհային ծրագրերի առաջին և երկրորդ փուլերը հայտարարվում են **երրորդ տեսակի՝ Բյուջետային ոլորտի երիտասարդ մասնագետներին աշխատանքային հիմունքներով ՔՀԿ-ում/ԶԼՄ-ում ներգրավելու նպատակով ՔՀԿ-ներին/ԶԼՄ-ներին տրամադրվող դրամաշնորհային ծրագրերի** առաջին և երկրորդ փուլերի հետ համատեղ: Հետևապես, առաջին տեսակով դրամաշնորհային ծրագրերի առաջին փուլով հայտ ներկայացնելու պարագայում տվյալ ՔՀԿ-ը և/կամ ԶԼՄ-ը կամ կոնսորցիումը կարող է դիմել նաև երրորդ տեսակի դրամաշնորհի համար: Այն մանրամասներ կարգավորված են սույն քաղաքականության 2-րդ գլխով: Երիտասարդ մասնագետները աշխատելու են հաղթած ծրագրի շրջանակներում՝ ի նպաստ ծրագրային գործողությունների կատարման և նպատակի նվաճման: Եթե դրամաշնորհային հայտը ներկայացվել է կոնսորցիումի կողմից, ապա երիտասարդ մասնագետի հետ աշխատանքային պայմանագիրը կնքվելու է հիմնական հայտատուն:

Ծրագրի կողմից նույն սուբյեկտին կարող է տրամադրվել մինչև երեք դրամաշնորհ՝ «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրով նախատեսված բյուջեի չափով:

Սույն հավելվածը լրացնում է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության դրամաշնորհների տրամադրման քաղաքականությունը, իսկ Հավելված 2-ում տեղ գտած դրույթների և Քաղաքականության միջև հակասություններ լինելու դեպքում գերակայում են «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության դրամաշնորհների տրամադրման քաղաքականության դրույթները:

2.1. Ծրագրի շրջանակներում տրամադրվող դրամաշնորհները Դրամաշնորհային հանձնաժողովի կողմից գնահատվելու են՝ հաշվի առնելով հետևյալ չափանիշները.

1. Վարչական ստուգում և հայտատուների համապատասխանության ստուգում

Վարչական չափանիշներ	Այո	Ոչ	Մեկնաբանություններ
1. Հայտը ներկայացվել է սահմանված ժամկետներում:			
2. Օգտագործվել է մրցույթի հայտարարությամբ շրջանառված դրամաշնորհային հայտի և դրան կից հավելվածների ձևը (այսուհետ՝ դրամաշնորհային հայտի ձև):			
3. Դրամաշնորհային հայտի ձևը լրացվել է պատշաճ կերպով:			
4. Հայտի փաթեթին կցվել են դրամաշնորհային մրցույթի հայտարարությամբ նախատեսված բոլոր փաստաթղթերը:			
5. Պահանջված ծրագրի բյուջեն համապատասխանում է ծրագրային առաջարկին:			
6. Հայտարարությանը համապատասխան՝ ծրագրի տևողությունը չի գերազանցում սահմանված ժամկետը:			
7. Հայտը ներկայացվել է իրավասու սուբյեկտի կողմից ⁵ :			

Ծանոթություն. Դրամաշնորհային հայտերը վերը նշված վարչական չափանիշներին չհամապատասխանելու դեպքում, կարող են չդիտարկվել:

2. Ծրագրային առաջարկի գնահատում

Ծրագրային առաջարկի գնահատումը կիրականացվի՝ ստորև ներկայացված գնահատման չափանիշներին համապատասխան՝ ըստ դրամաշնորհի յուրաքանչյուր տեսակի:

1. Բյուջեի մոնիթորինգ և վերլուծություն իրականացնելու նպատակով տրամադրվող դրամաշնորհային ծրագրեր

Գնահատման չափանիշներ	Առավելագույն միավորներ
----------------------	------------------------

⁵ Վերաբերում է ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների հիմնադիրներին: Եթե ՔՀԿ-ը և/կամ ԶԼՄ-ը, կամ կոնսորցիումի անդամներից առնվազն մեկը հիմնադրվել է (ստեղծվել է) պետական, տեղական (համայնքային) կամ առևտային կազմակերպությունների (մարմինների) կողմից, հիշյալ հայտը չի անցնում վարչական ստուգումը և դիտարկվում է անհամապատասխան:

1. Բյուջեի մոնիթորինգ և վերլուծություն, շահերի պաշտպանություն իրականացնելու ուղղությամբ հայտատուի (հայտատուների) տեսլականը: Մոնիթորինգը հիմնված է շահառու խմբերի հատուկ կարիքների վրա և հստակեցված է, թե ինչպես կարող են արդյունքները օգտագործվել բյուջետային գործընթացի վրա ազդելու նպատակով և նշված են, թե ո՞ւմ համար են այդ արդյունքները:	20
2. Անհրաժեշտ փորձը և (կամ) հետաքրքրությունը պետական բյուջեների, բյուջեի վերլուծության, մոնիթորինգի, մասնակցության ապահովման և շահերի պաշտպանության իրականացման ոլորտներում: Նմանատիպ փորձի առկայությունը արդարադատության, կրթության, սոցիալական ապահովության և գյուղատնտեսության ոլորտներում: Ծրագրային առաջարկը ներկայացվել է համատեղ՝ կոնսորցիումով, և սահմանված են համագործակցող կողմերի հարաբերությունները, դրանց միջև պարտականությունների և լիազորությունների բաժանումը:	15
3. Հայտի համապատասխանությունը «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի հիմնական նպատակին (Overall Objective) և առանձնահատուկ նպատակներին (խնդիրներին) (Specific Objectives):	20
4. Առաջարկվող գործողությունների հստակությունը, հաջորդականությունը, փոխկապակցվածությունը և արդյունավետությունը:	15
5. Ծրագրի իրականացման ընթացքում անմիջական շահառուների ներգրավվածության մակարդակը (աստիճանը) և ծրագրի կայունությունը:	15
6. Բյուջեի համապատասխանությունը առաջարկվող գործողություններին. համապատասխանո՞ւմ են միմյանց ծախսերը և գործողությունները, ծախսերը և ակնկալվող արդյունքները:	15
Ընդհանուր միավորներ	100

2. Բյուջետային գործընթացում թիրախային ուղղություններով շահերի պաշտպանության քարտզարշավ իրականացնելու նպատակով տրամադրվող դրամաշնորհային ծրագրեր

Գնահատման չափանիշներ	Առավելագույն միավորներ
1. Անհրաժեշտ փորձը և (կամ) հետաքրքրությունը շահերի պաշտպանության և հանրային քաղաքականության մշակման ոլորտներում: Ծրագրային առաջարկը ներկայացվել է համատեղ՝ կոնսորցիումով, կամ անհրաժեշտ սուբյեկտային կազմով ⁶ , և սահմանված են համագործակցող կողմերի հարաբերությունները, դրանց միջև պարտականությունների և լիազորությունների բաժանումը:	20
2. Հայտի համապատասխանությունը «Բյուջեներ քաղաքացիների համար»	15

⁶ Ըստ անհրաժեշտության՝ վերաբերում է ԶԼՄ-ներին կամ նրանց ներգրավվածությանը կոնսորցիումի կազմում:

ծրագրի հիմնական նպատակին (Overall Objective) և առանձնահատուկ նպատակներին (խնդիրներին) (Specific Objectives):	
3. Առաջարկվող շահերի պաշտպանության արշավի փոխկապակցվածությունը «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում իրականացված մոնիթորինգի և/կամ համանման այլ ծրագրերի մոնիթորինգային արդյունքների հետ:	20
4. Առաջարկվող գործողությունների հստակությունը, հաջորդականությունը, փոխկապակցվածությունը և արդյունավետությունը:	15
5. Ծրագրի իրականացման ընթացքում անմիջական շահառուների ներգրավվածության մակարդակը (աստիճանը) և ծրագրի կայունությունը:	15
6. Բյուջեի համապատասխանությունը առաջարկվող գործողություններին. համապատասխանում են միմյանց ծախսերը և գործողությունները, ծախսերը և ակնկալվող արդյունքները:	15
Ընդհանուր միավորներ	100

3. Բյուջետային ոլորտի երիտասարդ մասնագետներին աշխատանքային հիմունքներով ՔՀԿ-ում/ԶԼՄ-ում ներգրավելու նպատակով տրամադրվող դրամաշնորհային ծրագրեր

Գնահատման չափանիշներ	Առավելագույն միավորներ
1. Անհրաժեշտ փորձը և (կամ) հետաքրքրությունը պետական բյուջեների, բյուջեի վերլուծության, մոնիթորինգի, մասնակցության ապահովման և շահերի պաշտպանության իրականացման ոլորտներում: Նմանատիպ փորձի առկայությունը արդարադատության, կրթության, սոցիալական ապահովության և գյուղատնտեսության ոլորտներում:	30
2. Բյուջեի մոնիթորինգի առաջարկվող թեմայի (ոլորտի) և կազմակերպության տեսլականի ու երիտասարդ մասնագետի կողմից կատարվող աշխատանքի ակնկալվող արդյունքների համապատասխանությունը, որը հայտատուն (հայտատուները) մտադիր է իրականացնել երիտասարդ մասնագետի ներգրավմամբ:	30
3. Առաջարկվող գործողությունների հստակությունը, հաջորդականությունը, փոխկապակցվածությունը և արդյունավետությունը (ՔՀԿ-ները ներկայացնում են գործողությունների ցանկ, որոնք կատարվելու են երիտասարդ մասնագետների կողմից):	20
4. Բյուջեի համապատասխանությունը առաջարկվող գործողություններին. համապատասխանում են միմյանց ծախսերը և գործողությունները, ծախսերը և ակնկալվող արդյունքները:	20
Ընդհանուր միավորներ	100

2.2. Հաղթող են ճանաչվում այն հայտերը, որոնք գնահատման արդյունքում ստացել են Հանձնաժողովի անդամների կողմից հաշվարկված միջինացված առնվազն 70 միավոր:

- 2.3. Դրամաշնորհային հանձնաժողովի աշխատանքների ողջ ընթացքում դիտորդի կարգավիճակով հրավիրվելու է (են) Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ներկայացուցիչ(ներ)ը:
- 2.4. Այն դեպքում, երբ հայտատուները (դիմող կազմակերպությունները) հայտերի գնահատման գործընթացի վերաբերյալ փորձեն ստանալ տեղեկատվություն, որը կստեղծի ակնհայտ առավելություն մյուս հայտատուների նկատմամբ, ինչպես նաև կփորձի որևէ եղանակով ազդել որոշումների կայացման գործընթացի վրա, ապա հայտատուն կգրկվի դրամաշնորհային մրցույթի մասնակցության իրավունքից:

3. ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐ

Դրամաշնորհային մրցույթին դիմելու իրավունք ունեցող կազմակերպություններին և պայմաններին կարող էք ծանոթանալ Կարգի 2-րդ գլխում:

5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

Դրամաշնորհների տրամադրման և ծրագրի իրականացման ամբողջ ընթացքը կիրականացվեն հետևյալ ընթացակարգերի շրջանակներում.

1. Դրամաշնորհային ծրագրին դիմելու հրավեր-հայտարարության հրապարակում:
2. Ներկայացված հայտերի գնահատում և հաղթող ճանաչված հայտատուների ցանկի հաստատում:
3. Ենթադրամաշնորհային պայմանագրերի ստորագրում հաղթող ճանաչված հայտատուների հետ:
4. Ենթադրամաշնորհների իրականացման ընթացքի վերաբերյալ փորձագիտական, այդ թվում՝ ֆինանսական խորհրդատվություն ստանալու նպատակով ուսուցման կազմակերպում:
5. Ծրագրի կայքում հաղթող ճանաչված դրամաշնորհային ծրագրերի հրապարակում և հաղթող ՔՀԿ-ների և/կամ ԶԼՄ-ների հետ ենթադրամաշնորհային պայմանագրերի կնքում:
6. Դրամաշնորհային ծրագրերի մոնիթորինգ և գնահատում:
7. Դրամաշնորհային ծրագրի արդյունքների քննարկում, հաստատում և հրապարակում:
8. Դրամաշնորհային ծրագրերի ավարտված փուլի գնահատում և դասերի քաղում:

6. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Դրամաշնորհային հանձնաժողովի անդամների թիվն ու անհատական կազմը հաստատվում է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության դրամաշնորհների տրամադրման Կարգի 4.1 կետով նախատեսված կարգով:

ՇԱՀԵՐԻ ԲԱՆՄԱՆ ԲԱՅԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

Ես՝ _____ (պաշտոն, անուն, ազգանուն) սույնով հավաստում եմ, որ ամբողջությամբ ծանոթացել եմ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության դրամաշնորհների տրամադրման քաղաքականությանը և սույն հավաստագրի ստորագրման օրվա դրությամբ չունեմ որևէ շահերի բախում: «Շահերի բախում» հասկացության տակ ես հասկանում եմ այնպիսի իրավիճակ, երբ ես չունեմ իմ, իմ հետ փոխկապակցված անձի կամ երրորդ անձի հետ կապված տնտեսական շահ, քաղաքական կամ ազգային, ընտանեկան կամ զգացմունքային կապեր կամ ցանկացած այլ կապ կամ համատեղ շահագրգռվածություն (այսուհետ՝ մասնավոր շահ), որն ազդում է կամ առերևույթ ազդում է կամ ողջամտորեն կարող է ազդել դրամաշնորհային մրցույթին ներկայացված հայտերի պատշաճ, օբյեկտիվ և անաչառ գնահատման վրա:

Ես սույնով պարտավորվում եմ չառաջնորդվել մասնավոր շահով, չկատարել այնպիսի գործողություն, որսևորել անգործություն կամ որոշում ընդունել (այդ թվում՝ կոլեգիալ մարմնի կազմում որոշում ընդունելուն մասնակցելը կամ որոշումներ ընդունելուն հանգեցնելը, ինչպես օրինակ՝ տեղեկություններ և պարզաբանումներ տրամադրելը կամ կարծիք հայտնելը և արտահայտվելը քննարկվող հարցերի և խնդիրների վերաբերյալ), որը թեև ինքնին օրինական է, սակայն հանգեցնում կամ նպաստում է կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել դրամաշնորհային մրցույթին մասնակցած հայտատուների ընտրությանը:

Ես սույնով պարտավորվում եմ անհապաղ տեղեկացնել Իրավաբանների հայկական ասոցիացիային ցանկացած իրավիճակի մասին, որն իրենից ներկայացնում է շահերի բախում կամ կարող է առաջացնել հնարավոր շահերի բախում:

Ես գիտակցում եմ, որ Իրավաբանների հայկական ասոցիացիային իրավունք է վերապահվում ստուգել սույն տեղեկատվության ճշմարտացիությունը, և ես տեղյակ եմ այն հետևանքների մասին, որոնք կարող են ծագել իմ կողմից տրամադրված ցանկացած կեղծ հայտարարության համար:

Անուն, ազգանուն՝ _____

Զբաղեցրած պաշտոնը՝ _____

Ստորագրություն՝ _____

Ամսաթիվ՝ _____